ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք.Երևան, Արշակունյաց 23
Հեռ.
Ձեր

Մուտքի թիվ .....

Ելքի թիվ Ե/Պ- 1-432

«12» 06 2019 թ.

«Առավոտ» առցանց լրատվական կայքի խմբագիր

տիկին Աննա Իսրայելյանին

/էլ. փոստ՝ anna@aravot.am/

Հարգելի տիկին Իսրայելյան,

Ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի հունիսի 7-ի թիվ Ա-039 գրության մեջ նշված տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցադրումների, տեղեկացնում եմ, որ.

1. ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության աշխատակիցների կողմից դատապարտյալների վերաբերյալ զեկույցները կազմվում են ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ հրամանով հաստատված կարգով և ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն:

2. Պրոբացիայի ծառայողը այցելելով դատապարտյալի պատիժը կատարող քրեակատարողական հիմնարկ, զրուցում է դատապարտյալի հետ, դատապարտյալի անձնական գործի ուսումնասիրման հիման վրա կազմում քաղվածք, անհրաժեշտության դեպքում՝ կատարում պատճեններ և կապված գործի առանձնահատկությունից այդ հանդիպումները կոնկրետ 5-10 րոպե չեն տևում, այլ կարող է պահանջվել երկար ժամանակահատված, նույնիսկ՝ պրոբացիայի ծառայողի կողմից կարող է պահանջվել երկրորդ անգամ այցելություն կատարել: Զեկույց կազմելիս պրոբացիայի ծառայողը

հանդիպումներ է ունենում ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների, տուժող կողմի հետ, դատապարտյալի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ է անում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հիմնարկներ և այլ կազմակերպություններ, ինչպես նաև համապատասխան ՔԿՀ-ների ծառայողների և այլ անձանց տրամադրած տվյալների հիման վրա կազմում է Զեկույց և ներկայացնում զեկույցը պահանջած մարմին:

3. Դատապարտյալների ընտանիքի անդամների կողմից ահազանգերի վերաբերյալ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը տեղեկություններ չունի և նման բողոքներ չի ստացել նրանցից: Դատապարտյալների ընտանիքի անդամներին տրվող հատուկ սահմանված հարցաշար չկա, իսկ դատապարտյալին տրվում են ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ հրամանով հաստատված կարգով զեկույց կազմելու համար Ձև 7 –ում նշված հարցերը:

4. ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից զեկույց կազմելիս հաշվի չի առնվում քրեակատարողական ծառայության կողմից տրված զեկույցը, քանի որ դրանք առանձին զեկույցներ են:

5. 2019 թվականի հունվարից-մայիս ժամանակահատվածում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը տրամադրել է 349 զեկույց, որից դրական՝ 83, բացասական՝ 266:

Հարգանքով՝
ԿԱԶՄԱԿԵՐՊԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **ԷԴԳԱՐ ԱՎԱԳՅԱՆ**

Կատարող՝ Անուշ Չիթչյան
կազմակերպամեթոդական բաժնի
գլխավոր մասնագետի ժ/պ
հեռ 010 44 09 27